376, 9

1. Կյանքս Քեզ եմ ընծայում,
Հիսո՛ւս, Քեզ եմ նվիրում,
Կյանքս Դու Ինքդ ես պահել
Եվ դեպի երկինք ուղղել:
Կյանքս, իմը չէ այն,
Քոնն է միշտ, հավիտյան,
Այն Դու ես ինձ տվել,
Որ միշտ Քեզ փառաբանեմ:

2. Սատանան այս աշխարհում
Ինձ հրապուրել է ուզում,
Որ ես իրեն ծառայեմ
Եվ մեղքերի մեջ ապրեմ:
Բայց ես խնդրում եմ Քեզ,
Որ Դու իմ մեջ ապրես
Եվ այդ պատերազմում
Ինքդ տաս ինձ հաղթություն:

3. Մաքուր եմ ուզում ապրել
Եվ բոլորին էլ սիրել,
Մեղքից, չարից հրաժարվել
Եվ Քո մասին մտածել:
Ո՜, իմ Տեր և Աստված,
Օգնի՛ր ինձ հասկանալ
Քո անսահման սերը
Եվ նրա մեջ իմ ապրելը:

4. Ծուտով փառքով կգաս Դու,
Կվերցնես եկեղեցուն,
Ինձ էլ պատրաստի՛ր, որ ես
Արժանի լինեմ, Տե՛ր, Քեզ:
Հավետ Քեզ հետ լինեմ
Եվ այնտեղ ես տեսնեմ
Այն ամենը, որ Դու
Խոստացել ես ինձ տալու: